ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/159

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 02.11.2018թ. թիվ 27-3/20050-18 գրությամբ «ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02584071) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 27.10.2018թ. թիվ 01-89-5229 գրության հիման վրա, 02.11.2018թ. նախաձեռնել է «ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն 27.10.2018թ. թիվ 01-89-5229 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն միակողմանի լուծել է 23.01.2018թ. կնքված թիվ ԱՀԱԿ-ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով «Պետության կարիքների համար հիվանդանոցային օժանդակ ծառայությունների, դռնապահ հիվանդապահի ծառայությունների մատուցման պետական գնման» պայմանագիրը: Պայմանագրի կողմ է հանդիսանում «ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ն, որի կողմից թույլ են տրվել էական խախտումներ, մասնավորապես, խախտվել են Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված ծառայությունների տեխնիկական բնութագրերը»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին ««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչներ Վարդան Գրիգորյանը, Կարեն Սարդարյանը, Կարեն Սահակյանը, Էդգար Բաղեմյանը, և Շուշանիկ Կարակոզյանը:

3. <u>«ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին 19.11.2018թ. թիվ Ե-89/18 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԱՆ ««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) և «ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ի միջև 23.01.2018թ. կնքվել է պետության կարիքների համար հիվանդանոցային օժանդակ ծառայությունների, դռնապահ հիվանդապահի ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիրը, որի անբաժանելի մասն են կազմում թիվ 1 հավելվածը, թիվ 1 համաձայնագիրը և թիվ 2 հավելվածը:

21.08.2018թ. պատվիրատուն ուղարկել է ծանուցում, համաձայն որի միակողմանի լուծել է նշված պայմանագիրը: Պատվիրատուի կողմից ծանուցման մեջ նշված պատճառներն անհիմն են, չեն համապատասխանում իրականությանը և ենթակա են մերժման՝ ստորև նշված փաստական հանգամանքների և հիմնավորումների լույսի ներքո:

1. Պատվիրատուն ծանուցման մեջ նշել է, որ «ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ի աշխատակից Արտավազդ Կանդիլջյանը 31.07.2018թ. 13:00-ի սահմաններում լքել է իր պահակակետը՝ այդ մասին տեղյակ չպահելով բուժանձնակազմին և բանալիները հանձնել է հիվանդապահ Մուշեղ Մելիքսեթյանին:

Անհրաժեշտ է փաստել, որ Արտավազդ Կանդիլջյան անունով աշխատակից «ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ում երբևէ չի եղել, հետևաբար, վերջինս չէր կարող կատարել որևէ խախտում: Դրա մասին է վկայում «ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից տրված տեղեկանքը:

2. Պատվիրատուն ծանուցման մեջ նշել է, որ 30.07.2018թ. իբր տեղի է ունեցել միջադեպ, որի ժամանակ դռնապահ-հիվանդապահը, որն ըստ տեխնիկական բնութագրի պարտավոր է հիվանդների հետ կապված միջադեպերին միջամտելու և անհրաժեշտության դեպքում՝ օգնություն ցուցաբերելու, ոչ միայն չի միջամտել, այլև հիվանդի պահանջով բացել է դուռը և վերջինիս դուրս թողել: Հիվանդը հարձակվել է բուժ. անձնակազմի վրա, իսկ աշխատակիցը որևէ օգնություն ցույց չի տվել:

Վերոգրյալ միջադեպն ամբողջությամբ դրված է կասկածի տակ, քանի որ.

- եթե նման միջադեպ տեղի ունեցած լիներ, ապա ՓԲԸ-ի համապատասխան աշխատակիցը, կամ տուժողը կզանգահարեր ՀՀ ոստիկանություն և կհայտներ միջադեպի մասին:

- նշված միջադեպի մասին տեղյակ կպահեին «ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ի տնօրինությանը:

- «ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ի աշխատակիցներն իրենց պարտականությունները կատարում են անթերի, քանի որ համապատասխան կերպով պատրաստված են:

3. Պատվիրատուն ծանուցման մեջ նշել է, որ ըստ տարբեր աղբյուրներից ստացված տեղեկությունների, Կատարող Ընկերության որոշ աշխատակիցներ պարբերաբար իրենց

հետ ալկոհոլային խմիչք են բերում ««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ և այն վաճառում են հիվանդներին:

Վերոգրյալը չի համապատասխանում իրականությանը, քանի որ Ընկերության աշխատակիցներին արգելված է ալկոհոլային խմիչք օգտագործել, իսկ ««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենը՝ պայմանագրի միակողմանի լուծման հիմքը նշելիս դրա հետ մեկտեղ որևէ վերաբերելի ապացույց չի նշել»:

««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի հայտարարությունը որակելով որպես զրպարտություն և Ընկերության բարի համբավը արատավորելու և վիրավորելու փորձ, «ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ն հավելել է հետևյալը.

«2018թ. օգոստոսին պատվիրատուն բանավոր կերպով հայտնել է կատարողին այն մասին, որ ուզում է կրճատել մատուցվող ծառայությունների քանակը 2/3-ով՝ առանց որևէ պատճառաբանության: Կատարող Ընկերությունը չի համաձայնել և մերժել է ««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի առաջարկը, ինչից հետո Ընկերության աշխատակիցներին արգելվել է մուտքը Պատվիրատուի շենքի տարածք: Գրեթե ամբողջ օգոստոս ամսվա ընթացքում Պատվիրատուի կողմից անօրինական կերպով խոչընդոտվել է Ընկերության աշխատակիցների մուտքը Պատվիրատուի շենք և այդ ընթացքում Ընկերությունը ծառայություն է մատուցել միայն դրսի հենակետում:

Տեղեկացնում եմ նաև, որ ««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի պարտքը Ընկերությանը կազմում է 4,797.818 ՀՀ դրամ:»:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է «ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը թողնել առանց բավարարման:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչներ՝ Արթուր Ավդալյանը և փաստաբան Ելենա Կասպարովան:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/159 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 02.11.2018թ. թիվ 27-3/20050-18 գրությունը և կից փաստաթղթերը, ««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի 27.10.2018թ. թիվ 01-89-5229 գրությունը, «ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ի Բողոքներ քննող անձին ներկայացրած 19.11.2018թ. թիվ Ե-89/18 գրությունը, ««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի և «ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ի միջև 23.04.2018թ. կնքված N ԱՀԱԿ-ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով գնման պայմանագիրը.

««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի և «ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ի միջև 23.04.2018թ. կնքվել N ԱՀԱԿ-ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հիվանդանոցային օժանդակ ծառայությունների, դռնպահ հիվանդապահի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն), համաձայն նույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:
- 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:
- 2.1.3 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

- 4.1 կետի համաձայն՝ պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 13,194,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

• 7.11 կետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, նույն կետով սահմանված կարգով հրապարակվելուն հաջորդող օրվանից:

• N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել են հետևյալ պայմանները.

«Դռնապահ հիվանդապահի ծառայությունների ձեռք բերման (ֆիզիկական պահպանության, ազդանշանային համակարգերի միացմամբ մասնակցի համակարգին և արագ արձագանքման խմբի միջոցով):

Պատվիրատուի օբյեկտները և տարածքները իրենց գլխավոր շինություններով և մասնաշենքերով պետք է ունենան 24 ժամյա (շուրջօրյա) ծավալի ծառայություն, համապատասխան պատվիրատուի կողմից տրված հրահանգների և պահանջների, շաբաթվա բոլոր օրերին, ներառյալ հանգստի և տոն օրերը: Հենակետերի քանակը երեքն են, որոնք կարող են փոփոխվել պատվիրատուի իսկ առաջին պահանջի դեպքում, ավելացնելով կամ նվազեցնելով հենակետերի քանակը: Նախատեսված պահնորդային ծառայություններ կատարելու համար անհրաժեշտ պահնորդների քանակը հերթափոխով աշխատելու համար՝ առաջնորդվել համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդվածի 4-րդ մասի և ՀՀ կառավարության 2005թ.-ի օգոստոսի 11-ի թիվ 1223- Ն որոշման հավելվածի 6-րդ կետի և ունենան պահնորդի որակավորում («Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը):

Պահնորդների ծառայությունը իրականացվում է օբյեկտում ամեն օր՝ 24 և 12 ժամյա ռեժիմով, ներառյալ հանգստի օրերը՝ շաբաթ և կիրակի, տոներին և հիշատակի օրերին:

1. 09:00—09:00 (24-ժամյա) – 3 (երեք) հենակետ-12 (տասներկու) պահնորդ, որից 4 հոգի դռնապահ, 8 հոգի դռնապահ-հիվանդապահ:

Ծառայության պատշաճ վերահսկելու համար, ինչպես նաև Պատվիրատուի հետ անընդմեջ կապը պահպանելու և իր պահանջներին օպերատիվ արձագանքելու նպատակով, Կատարողը պետք է ունենա պահպանության տարածքներին և վայրերին կցված առանձին պատասխանատու:

Կատարողը կազմակերպում և ապահովում է՝

Պահպանվող օբյեկտի հարկաբաժիններում 3 (երեք) հենակետերով ապահովել անվտանգությունը և հասարակական կարգը:

Ստանցիոնար բաժանմունքում ապահովել բուժ. անձնակազմի անվտանգությունը և վերահսկել ագրեսիվ հիվանդների վարքագիծը, օրենքով սահմանված նորմերի համաձայն և ըստ պատվիրատուի հրահանգների:

Պահպանվող օբյեկտի մասնաշենքում ապահովել անվտանգությունը՝ ագրեսիվ վարքագիծ դրսևորող այցելուների և ուղեկցողների նկատմամբ, իրականացնել համապատասխան միջոցառումներ օրենքով սահմանված կարգով:

Սանիտարահիգիենիկ և բուժական պրոցեդուրաների անցկացման ընթացքում ապահովել բուժ. անձնակազմի անվտանգությունը:

Պատվիրատուի օբյեկտի, տարածքների, ինչպես նաև պատվիրատուի կողմից կատարողի պահպանությանը հանձնված ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պահպանությունը:

• Գողությամբ կամ այլ հանրորեն վտանգավոր արարքով Պատվիրատուին պատճառած նյութական վնասի չափը որոշելու համար, մասնակցում է ապրանքանյութական արժեքների հաշվարկմանը:

• Կատարողը կրում է նյութական պատասխանատվություն գողությամբ կամ այլ հանրորեն վտանգավոր արարքով Պատվիրատուին պատճառված վնասի դեպքում, եթե վնասն առաջացել է կատարողի կողմից պայմանագրի պայմանների խախտման արդյունքում:

• Անմիջապես Պատվիրատուին և ոստիկանությանը Կատարողը իրազեկում է պատահարի մասին: Իսկ անվտանգության ահազանգման համակարգով ահազանգ ստանալու դեպքում իր համապատասխան աշխատակիցների միջոցով ահազանգ ստանալուց հետո, պարտավոր է անհապաղ այդ մասին հաղորդել Պատվիրատուի

համապատասխան ստորաբաժանմանը, իսկ պատահարների ժամանակ, ինչպես նաև Ոստիկանության համապատասխան բաժին Պատվիրատուից հրահանգ ստանալու պարագայում:

• Ահազանգ ստանալուց հետո Կատարողը ապահովում է իր համապատասխան շրջիկ պահակախմբի՝ ԱԱԽ այցը նշված օբյեկտ:

• Նշված պայմանները ապահովելու նպատակով ընկերությունը օգտագործում է իր համապատասխան տեխնիկական միջոցները:

• Ապահովում է ըստ Պատվիրատուի պահանջի, օբյեկտների անվտանգության, ֆիքսված պահակակետերում, Դռնապահ հիվանդապահների միջոցով՝ համապատասխան նախանշված ժամանակով:

• Բոլոր Դռնապահ հիվանդապահները պարտավոր են կրել համապատասխան հանդերձանք անվտանգության աշխատակցի տարբերանշանով, և պետք է ունենան անվտանգության տեսուչի անձը հաստատող վկայական, իսկ ծառայություն տանող ավտոմեքենաներն պետք է ունենան հատուկ տարբերանշաններ, ինչպես նաև թույլտվություն լուսաթարթող ազդանշանային համակարգ կրելու համար:

• Կատարողը տագնապային ահազանգման համակարգերի դիտարկման մեթոդը, պետք է թույլ տա ճանաչելու տագնապի տեսակը, օբյեկտի անվանումը և վայրը՝ GSM և GPS համակարգով, նույնիսկ այն պարագայում եթե կվնասվեն հեռախոսազանգերը:

• Պատվիրատուի առաջին իսկ պահանջով և անհրաժեշտության դեպքում, օրվա ցանկացած ժամին Կատարողի կողմից նշանակվում է հավելյալ ֆիքսված պահպանման կետ:

• Կատարողը ապահովում է շուրջօրյա Դռնապահ հիվանդապահի ծառայություն (վերահսկում) ավտոմեքենաներով՝ համապատասխան տեխնիկական զինվածությամբ, ինչպես նաև արագ արձագանքման խումբ՝ զինված համապատասխան տեխնիկական միջոցներով, հանդերձանքով:

• Կատարողը վերահսկում է իր ծառայությունների ամբողջ ընթացքը շուրջօրյա, դիտարկելով իր դիսպետչերական /Վերահսկման Կենտրոնից/ դռնապահ հիվանդապահների հերթափոխների հանձնում-ընդունումը, պահպանության վայրերից

իրավիճակի վերաբերյալ հաղորդակների ընդունումը և գրանցումը, ահազանգի դեպքում արագ արձագանքման խմբի ուղղեգրումը տագնապի վայրը և այլն:

Կատարողի հիմնական Պարտականությունները.

• Տարածքի, գույքի և նյութական արժեքների պահպանում վնասներից, գողություններից, հարձակումներից, կորուստներից, ինչպես նաև անմիջական սպառնալիքներից:

• Անցագրային գործառույթների իրականացում,

• Անհրաժեշտության դեպքում հյուրերի և այցելուների ուղեկցում,

• Անցագրերի /անցաթղթերի դուրսգրում և տրամադրում,

• Այցելուների գրանցում համապատասխան գրանցամատյանում,

• Ընդունող անձնակազմին տեղեկացում և զեկուցում այցելուի վերաբերյալ,

• Անձը հաստատող փաստաթղթի ստուգում, տարածք մուտք գործելուց առաջ,

• Այցելուների պատշաճ պահվածքի վերահսկողություն Պատվիրատուի տարածքներում գտնվելիս,

• Զեկուցել անհամապատասխանությունների, խախտումների և պատահարների մասին,

• Անմիջապես արձագանքում տագնապային կոճակների, հրդեհային համակարգի ահազանգի ակտիվացման դեպքերում, ինչպես նաև տարածքում հակահրդեհային վերահսկման ապահովումը,

• Պայթուցիկի սպառնալիքի դեպքերում գործողություններ կատարել պատվիրատուի կողմից սահմանված Արտակարգ Իրավիճակների Գործողությունների պլանին համապատասխան,

• Հեռախոսազանգերին պատասխանել աշխատանքային ժամերից դուրս և ստացված տեղեկությունները հաղորդել համապատասխան աշխատակցին,

• Համապատասխան Պատվիրատուի կողմից տրված հրահանգի, փոստային նամակների և ծրարների ստուգում, նախապես դրանց բաշխված լինելը անձնակազմին,

• Ոչ լիազորված անձանց մուտքի արգելումը տարածք,

• Լիազորված ավտոմեքենաների մուտքի /ելքի կազմակերպում և համապատասխան կայանատեղի տարածքներում ապահովելը,

• Գլխավոր դարպասների գործածումը և մեքենաների ստուգումը նախապես մուտք թույլատրելուց առաջ,

• Ժամանակավոր կայանելու դեպքում, անցագրերի տրամադրում իսկ մշտական կայանելու թույլտվության անցագրերի առկայության դեպքում նրանց ստուգումը,

• Գրանցամատյաններում համապատասխան գրառումների իրականացում, տարածքում անընդմեջ շրջայցերի իրականացում,

• Հակահրդեհային կանոնների ապահովումը և պահպանումը,

• Զեկուցել վերադասին, Պատվիրատուի համապատասխան անձնակազմին և ընկերության Վերահսկողական Կենտրոնին բոլոր տեսակի ակնհայտ և կասկածելի գործողությունների և առարկաների վերաբերյալ տարածքում կամ նրա մոտակայքում,

• Համապատասխան դուրս մղում բոլոր այն այցելուներին, որոնք փորձում են խախտել կամ չեն հետևում անվտանգության, առողջության և կենսագործունեության ապահովման կանոններին կամ փորձում են խախտել հասարակական կարգը սրահների ներսում,

• Պոտենցիալ ռիսկերի գոտիների այցելություն և ստուգում,

• Հրդեհավտանգ տարածքների վերահսկում և ստուգում,

• Ընդհանուր անվտանգության վերահսկում, աշխատանքի անվտանգության և կենսագործունեության կանոնների պահպանում այցելուների, հյուրերի և աշխատակիցների կողմից,

• Արտակարգ Իրավիճակներում տարահանման կազմակերպում,

• Հետևել չծխելու քաղաքականության կանոններին,

• Արգելել ոչ լիազորված ավտոմեքենաների կայանելը պահպանվող մուտքերի առջև,

• Տարածքի արգելված ծառայողական գոտու սահմաններից ներս թույլ չտալ որևէ ոչ լիազորված անձի ներթափանցումը, իսկ ներխուժման փորձերը կտրուկ կանխարգելել,

• Շրջայցների իրականացում շենքի ներսում և արտաքին պարագծով, որոշակի ժամանակահատվածում, ինչպես նախատեսված է Ծառայության հրահանգների ցանկում:

• Այլ պարտականություններ, տրված Պատվիրատուի կողմից և հաստատված երկկողմանի Դոնապահ Հիվանդապահների Հրահանգացանկով:

• Կատարողի այլ պարտականությունները.

• Կատարող ընկերությունը պարտավոր է պահպանվող տարածքները սարքավորել պահնորդի շարժման հետագծի վերահսկիչ տեխնիկական միջոցներով՝ չիպերով:

• Արձագանքում է պատվիրատուի բոլոր տեսակի ի հայտ եկած պահանջներին, պայմանագրի իրականացման հետ կապված խնդիրների շրջանակում,

• Վերահսկողական ստուգման այցելություններ՝ ծառայության վայրեր,

• Շրջիկ պարեկային ծառայության հետ կապված ճշտապահության վերահսկում,

• Զեկուցագրերի և գրանցամատյանների ստուգում

• Որակի Կառավարման Համակարգի ընթացակարգերի վերահսկում և Կատարման Հիմնական Ցուցանիշների ապահովում /KPIs/,

• Անհամապատասխանության զեկուցագրերի վերլուծություն և վերացում,

• Հենակետերում Դռնապահ Հիվանդապահների կողմից իրենց պարտականությունների պատշաճ կատարման վերահսկողություն,

• Օժանդակել և աջակցել հենակետերում գտնվող Դռնապահ Հիվանդապահների արտակարգ իրավիճակներում պատահարների, միջադեպերի և կոնֆլիկտների ժամանակ,

• Ռադիոկապի ստուգման իրականացում հենակետերի, ՇՊԾ-ի անձնակազմի և Վերահսկողության Կենտրոնի հետ:

Այլ պարտականություններ, տրված Պատվիրատուի կողմից և հաստատված երկկողմանի Դռնապահ Հիվանդապահների Հրահանգացանկով:

1. Հերթափոխների ցուցակները ներկայացվում են Պատվիրատուի Անվտանգության պատասխանատուին ամեն շաբաթվա ավարտին, բանավոր կամ գրավոր, և ցանկացած փոփոխությունների վերաբերյալ հերթափոխների ցուցակների մեջ անմիջապես տեղեկացվում և համաձայնեցվում է պատվիրատուի հետ: Պատվիրատուի անվտանգության պատասխանատուին տրամադրվում են լրացուցիչ Դռնապահ Հիվանդապահների անունները, այն աշխատակիցների, որոնք նախապես ներկայացվել են պահպանվող տարածքում և որոնք կարող են հանդես գալ որպես փոխարինողներ, եթե տեղի է ունեցել բացակայություն:

2. Դռնապահ Հիվանդապահները իրականցնում և պահպանում են բոլոր անհրաժեշտ գրառումները և գրանցումները իրենց կողմից մուտք արած փաստաթղթերում և գրանցամատյաններում:

3. Դոնապահ Հիվանդապահները պատասխանատու են ամբողջ մուտքի վերահսկման գործընթացի և ստուգման կարգի համար, պետք է հետևեն, որ իրենց գործողությունները համապատասխանեն պատվիրատուի կողմից սահմանված կարգին, կապված այցելուների անձը հաստատող փաստաթղթերի ստուգման, անցագրերի դուրս գրման և տեղեկացնելու հետ այցելուի ժամանման վերաբերյալ: Ցանկացած կասկածելի իր կամ առարկա պետք է ստուգվի տեսողական կամ օգտագործելով մետաղորսիչներ: Այն իրերը, որոնց մուտքը արգելված է տարածք՝ ժամանակավոր առգրավվում և պատշաճ պահվում են Դեպոզիտային առանձին արկղերում, և ետ են վերադարձվում այցելուի դուրս գալու պահին: Մուտքը պետք է արգելվի ցանկացած այցելուի համար, ով տարածք կմտնի հրազենով կամ կյանքի համար վտանգավոր առարկայով: Նման թույլտվություն կարող է տալ միայն պատվիրատուի համապատասխան աշխատակիցը:

4. Դոնապահ հիվանդապահները չպետք է լքեն իրենց հենակետը մինչև համապատասխանորեն չհանձնեն հերթափոխը: Այն դեպքում եթե անհրաժեշտ է անհապաղ փոխարինություն, նրանք պետք է հաղորդեն Վերահսկող Կենտրոնի հերթապահ դիսպետչերին, որը պետք է ապահովի հերթափոխի փոխարինումը նոր Դոնապահ Հիվանդապահով:

5. Բոլոր Դոնապահ Հիվանդապահի ծառայություն մատուցող աշխատակիցները պետք է լինեն վերապատրաստված և իրազեկված պայթյունի վտանգի կամ սպառնալիքի ահազանգի դեպքում գործելու ընթացակարգին, համապատասխան Պատվիրատուի Արտակարգ Իրավիճակների Պլանին: Տարահանման ծրագիրը պետք է քննարկվի պատվիրատուի հետ և կիրահանգվի Դոնապահ Հիվանդապահներին: Տարահանման վարժանքները և արձագանք պայթունի առկայության դեպքում պարբերաբար պետք է իրականացվի պատվիրատուի հետ սեղմ համագործակցության և թույլտվության պայմաններում:

6. Դոնապահ Հիվանդապահների թիմը ուղղակիորեն պատասխանատու է բոլոր իրենց տրամադրված և հանձնված սարքավորումների համար պատկանող պատվիրատուին կամ կատարողին:

7. Այն դեպքում եթե նկատվի կամ հայտնաբերվի կասկածելի գործողություններ կամ փորձ ուղղված հավաքելու տեղեկատվություն Պատվիրատուի կամ նրա աշխատակցի

մասին կամ նրան ներկայացնող կազմակերպությունների, ապա Դռնապահ Հիվանդապահները անմիջապես պետք է զեկուցեն պատվիրատուի Անվտանգության պատասխանատուին և կներկայացնեն գրավոր զեկուցագիր:

8. Դռնապահ Հիվանդապահը չի ներկայանա ծառայության վայր ալկոհոլային խմիչքի ազդեցության տակ կամ այն դեպքում, եթե ընդունում է ուժեղ դեղեր, որոնք կարող են հանգեցնել պարտականությունների ոչ պատշաճ կատարմանը: Դռնապահ Հիվանդապահների բժշկական ստուգման թղթերը, արխիվացված են մարդկային ռեսուրսների կառավարման մենեջերի կողմից և կարող են տրամադրվել Պատվիրատուին իր իսկ առաջին պահանջի դեպքում:

9. Երբ տեղի է ունեցել միջադեպ կամ անվտանգությանը վերաբերվող ցանկացած պատահար, Դռնապահ Հիվանդապահը անմիջապես պետք է տեղեկացնի պատվիրատուի կողմից նշանակված պատասխանատուին: Դռնապահ Հիվանդապահը լրացնում է Միջադեպի Զեկուցագիրը՝ նկարագրելով եղելությունը և նշում է այն բոլոր գործողությունները, որը նա և իր գործընկերները իրականացրել են միջադեպը կանխելու, կամ նրա հետևանքները սահմանափակելու ուղղությամբ: Գրավոր զեկուցագիրը ներկայացվում է պատվիրատուին:

10. Դռնապահ Հիվանդապահին չի թույլատրվում հաղորդել որևէ տեղեկություն հեռախոսով կամ այլ կերպ Պատվիրատուի աշխատակիցների մասին, բացառությամբ տվյալ աշխատակցի տեղում լինելու վերաբերյալ:

11. Գույքի դուրս բերումը տարածքներից պետք է իրականացվի Պատվիրատուի պատշաճ ընթացակարգին համաձայն՝ հիմք ընդունելով պատվիրատուի լիազորված անձի կողմից ստորագրված անցագրերը: Սահմանված ընթացակարգը պետք է ապահովի ոչ միայն պատվիրատուի սեփականություն հանդիսացող նյութական արժեքները, որոնք չպետք է դուրս հանվեն տարածքից՝ առանց նախնական թույլտվության: Երկու տեսակի «վերադարձվող» և «ոչ վերադարձվող» անցագրերը պետք է գրանցվեն և ապահովեն թույլտվություն ապրանքների և իրերի դուրս բերման համար:

12. Ոչ մի տեսակի արգելված զենք չպետք է պահվի անվտանգության աշխատակիցների մոտ, պահակակետում, հենակետերում կամ պատվիրատուի որևէ տարածքներում: Բացառիկ դեպքերում միայն Դռնապահ Հիվանդապահները կարող են

կիրառել ողջամիտ ֆիզիկական ուժ, որը պետք է համաչափ լինի սպառնալիքի կամ դիմադրության չափին:

13. Պայմանագրի շրջանակներում բոլոր հենակետերը պետք է ապահոված լինեն առաջին բուժ.օգնության նյութերով և պարագաներով:

Շրջիկ Դռնապահ Հիվանդապահների և այցելությունների ծառայություն.

• Կատարողի ավտոմեքենաները պետք է հագեցված լինեն ծառայողական մեքենաներին համապատասխան և ունենան տարբերիչ նշաններ և դեղին լուսաթարթող համակարգ:

• Բազային ռադիոկապի կայանները ապահովում են կայուն հաղորդակցություն Վերահսկողության Կենտրոնի հետ և Երևանի պահպանվող վայրերի հետ:

• Անընդմեջ տեսչական ստուգումները ապահովելու համար կատարողի շրջիկ Դռնապահ Հիվանդապահները պետք է իրականացնեն ամենօրյա այցելություններ՝ կատարողի պայմանագրերով հանձնված ծառայության վայրերը ցերեկվա և գիշերվա ժամերին:

• Շրջիկ Դռնապահ Հիվանդապահների ծառայության առանձին ստորաբաժանման գործառույթներից է նաև Տագնապային Համակարգի ակտիվացումից հետո շատ կարճ ժամանակում արձագանքել տագնապին: Արագ Արձագանքման հերթապահ թիմը պետք է այցելի տարածք, որտեղից ստացվել է ահազանգը կամ որտեղ սեղմվել է տագնապային կոճակը /ոտնակը/:

• Բոլոր տեսակի այցելությունների արձանագրումը պետք է իրականացվի Շրջայցների Վերահսկման էլեկտրոնային Գրանցման Համակարգի միջոցով: Էլեկտրոնային արձանագրությունների տարբերակը ներկայացվում է պատվիրատուին ըստ պահանջի:

Տագնապային Համակարգի Հեռահար Դիտարկում և Արձագանքում նրա Ակտիվացման ժամանակ:

• Կատարողի Վերահսկողության Կենտրոնը, Արագ Արձագանքման հերթապահ թիմը և Դռնապահ Հիվանդապաների ծառայությունը իրականացվող անձնակազմը պետք է կատարի Պատվիրատուի տարածքներում տեղադրված ազդանշանային համակարգի ազդակների և տագնապային կոճակների /ոտնակների, հաղորդակների/ շուրջօրյա դիտարկում:

• Ազդանշանային համակարգը /տագնապային կոճակները/ միացված պետք է լինեն ընկերության «Վերահսկողության Կենտրոնի Դիտարկման Համակարգին» «Վերահսկողության Կենտրոնի Դիտարկման Համակարգը» պետք է թույլ տա ընդունել տագնապի ազդակը, առանց ֆիքսված հեռախոսակապային գծերի:

• Հաշվի առներով, որ պատվիրատուի մոտ տեղադրված համակարգը պետք է աշխատի անթերի, ապա տագնապային համակարգերը համատեղ ստուգվում են Պատվիրատուի ներկայացուցչի հետ, առնվազն մեկ անգամ երկու շաբաթվա ընթացքում:

• Հայտնաբերված և արձանագրված թերությունները ներկայացվում են Պատվիրատուին գրավոր կերպով և ողջամիտ ժամկետում վերացվում է կատարողի կողմից:

Տագնապային համակարգի ակտիվացման ժամանակ Կատարողի գործողությունները:

• Կատարողը պարտավոր է՝

• Անմիջապես և ժամանակին արձագանքել տագնապային համակարգի կամ կոճակի /ոտնակի/ ակտիվացմանը այն տարածքներից, որոնք հագեցված են համակարգով և այն դեպքում, եթե նրանք միացված են Կատարողի Վերահսկողության Կենտրոնին:

• Ակտիվացմանը պետք է արձագանքի շրջիկ Դռնապահ Հիվանդապահների կամ արագ արձագանքման հերթապահ թիմը և մեքենայի անձնակազմը, որը կգտնվի ամենահարմար և մոտիկ դիրքում:

• Տագնապի ազդանշան արձակված տարածքում Դռնապահ Հիվանդապահների խումբը պետք է գործի համապատասխան երկկողմանի հաստատված հրահանգի և ընթացակարգի: Եթե հայտնաբերվել են ներխուժման հետքեր կամ կասկածելի իրավիճակ, շրջիկ Դռնապահ Հիվանդապահների խումբը պարտավոր է հաղորդել Պատվիրատուին կամ արտակարգ կացության մեջ՝ ոստիկանությանը:

• Դռնապահ Հիվանդապահը պարտավոր է նաև կապ հաստատել իր անմիջական պատասխանատուի հետ և տեղեկացնել իրավիճակի մասին և իր կողմից ձեռնարկված միջոցների վերաբերյալ:

• Եթե տեղի է ունեցել կեղծ տագնապ, ապա Դռնապահ Հիվանդապահը պարտավոր է զեկուցել Վերահսկողության Կենտրոնին և գրանցում կատարել համապատասխան գրանցամատյանում:

Շրջայցերի իրականացում Դռնապահ Հիվանդապահների անձնակազմի կողմից.

• Հենակետի Դռնապահ Հիվանդապահները պարտադիր պետք է իրականացնեն ոտքով շրջայցներ համաձայն ժամանակացույցի և ինտերվալների, հրահանգված Պատվիրատուի կողմից: Յուրաքնչյուր շրջայցի ավարտից հետո, նրանք պետք է զեկուցեն ընկերության Վերահսկողության Կենտրոնին: Դիսպետչեր-հսկիչը պետք է կատարի համապատասխան գրառում հատուկ նշանակված տեղեկամատյանում: Շրջայցների ճշտապահությունը վերահսկելու նպատակով, Դռնապահ Հիվանդապահները պետք է օգտագործեն «Շրջայցների Վերահսկման Էլեկտրոնային Գրանցման Հանմակարգ», որում զետեղված տեղեկատվության էլեկտրոնային կամ տպած տարբերակը պետք է ներկայացվեն Պատվիրատուին:

Գաղտնիության ապահովման երաշխավորումը»:

Նույն Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ծառայության մատուցման վերջնաժամկետ է սահմանվել 15.12.2018թ.:

««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի կողմից 27.08.2018թ. Ընկերությանը ուղարկվել է ծանուցում՝ ««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի և «ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ի միջև 23.01.2018թ. կնքված պայմանագիրը միակողմանի լուծելու մասին: Որպես պայմանագրի լուծման հիմք Պատվիրատուի կողմից ծանուցման մեջ մատնանշվել են Ընկերության կողմից թույլ տրված մի շարք էական խախտումներ, մասնավորապես.

1. Կատարող Ընկերության աշխատակից Արտավազդ Կանդիլջյանը 31.07.2018թ. 13:00-ի սահմաններում լքել է իր պահակակետը՝ այդ մասին տեղյակ չպահելով բուժ. անձնակազմին և բանալիները հանձնել է հիվանդապահ Մուշեղ Մելիքսեթյանին:

Մինչդեռ, Պայմանագրի թիվ 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագրի 4-րդ կետի համաձայն՝ դռնապահ հիվանդապահները չպետք է լքեն իրենց հենակետը մինչև համապատասխանորեն չհանձնեն հերթափոխը:

2. 30.07.2018թ. տեղի է ունեցել միջադեպ, որի ժամանակ դռնապահ-հիվանդապահը, որն ըստ տեխնիկական բնութագրի պարտավոր է հիվանդների հետ կապված միջադեպերին միջամտելու և անհրաժեշտության դեպքում՝ օգնություն ցուցաբերելու, միջադեպի ընթացքում ոչ միայն չի միջամտել, այլև հիվանդի պահանջով բացել է դուռը և վերջինիս դուրս թողել, ընդ որում հիվանդը գտնվում էր պարտադիր բուժման մեջ: Հիվանդը հարձակվել է բուժանձնակազմի վրա, իսկ աշխատակիցը որևէ օգնություն և միջամտություն ցույց չի տվել:

3. Ըստ տարբեր աղբյուրներից ստացված տեղեկությունների, Կատարող Ընկերության որոշ աշխատակիցներ պարբերաբար իրենց հետ ալկոհոլային խմիչք են բերում ««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ և այն վաճառում են հիվանդներին:

Այսպիսով, վերոգրյալով պայմանավորված՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության համապատասխան, 15.12.2017թ. գնման հայտը նախագծած պատասխանատու ստորաբաժանման կողմից տրվել է բացասական եզրակացություն:

««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար կազմակերպված ԱՀԱԿ-ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում կնքված պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը Պատվիրատուն 27.08.2018թ. հրապարակել է նաև www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի մոտ կայացած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչները պնդեցին ««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի կողմից 27.08.2018թ. Ընկերությանն ուղարկված ծանուցմամբ արձանագրված խախտումների վերաբերյալ դիրքորոշումը, Բողոքներ քննող անձին ներկայացնելով նաև ՓԲԸ-ի անձնակազմի կողմից ներկայացված համապատասխան զեկուցագրեր:

Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ 27.08.2018թ. Պատվիրատուի կողմից ուղարկված ծանուցման մատնանշված պատճառաբանություններն անհիմն են, չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են Ընկերության բազմամյա աշխատանքն ու բարի համբավը:

Առանձին-առանձին անդրադառնալով ծանուցմամբ արձանագրված խախտումներին, վերջինս նշեց, որ Պատվիրատուի ծանուցման մեջ նշված՝ Արտավազդ Կանդիլջյան անունով աշխատակից «ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ում երբևէ չի աշխատել, հետևաբար, վերջինս չէր կարող կատարել որևէ խախտում: Որպես ապացույց՝ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց «ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից 12.11.2018թ. տրված տեղեկանքն առ այն, որ Արտավազդ Կանդիլջյանը երբևէ չի հանդիսացել «ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ի աշխատակից:

Ինչ վերաբերում է 30.07.2018թ. իբր տեղի ունեցած միջադեպին, որի ժամանակ դռնապահ-հիվանդապահը ոչ միայն չի միջամտել, ինչը պարտավոր էր անել ըստ Պայմանագրի տեխնիկական բնությագրի, այլև հիվանդի պահանջով բացել է դուռը, վերջինիս դուրս թողել, ինչի արդյունքում հիվանդը հարձակվել է բուժանձնակազմի վրա, ապա Ընկերության ներկայացուցիչը՝ կասկածի տակ դնելով վերոգրյալի իսկությունը, շեշտեց, որ եթե նման միջադեպ տեղի ունեցած լիներ, ապա ՓԲԸ-ի համապատասխան աշխատակիցը կամ տուժածը կզանգահարեին ՀՀ ոստիկանություն և կհայտնեին միջադեպի մասին: Ի պատասխան՝ Պատվիրատուի ներկայացուցիչները Բողոքներ քննող անձին ներկայացրեցին բուժանձնակազմի (հերթապահ բժիշկ, ավագ բուժքույր) կողմից ՓԲԸ-ի փոխտնօրենին ուղղված զեկուցագրերը, որոնցում նկարագրված են կատարված միջադեպի մանրամասները, և հայտնեցին, որ բուժանձնակազմի կողմից կատարվել են նաև զանգեր ոստիկանություն, ավելին, միջադեպից հետո անձնակազմի տուժած անդամները հասցվել են բուժհաստատություն՝ առաջին օգնություն ստանալու նպատակով:

Անդրադառնալով ծանուցման մեջ նշված երրորդ հիմքին, ըստ որի, տարբեր աղբյուրներից ստացված տեղեկությունների համաձայն՝ Ընկերության որոշ աշխատակիցներ պարբերաբար իրենց հետ ոգելից խմիչք են բերում ««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ և այն վաճառում են հիվանդներին, Ընկերության ներկայացուցիչը հավաստեց, որ այն չի համապատասխանում իրականությանը, քանի որ Ընկերության աշխատակիցներին խստիվ արգելված է ոգելից խմիչք օգտագործել:

Ընկերության ներկայացուցիչը հավելեց, որ Պատվիրատուի կողմից բազմիցս փորձ է կատարվել կրճատելու Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների քանակը, իսկ

երբ Ընկերությունը չի համաձայնել, և մերժել է ««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի առաջարկը, Ընկերության աշխատակիցներին արգելվել է մուտք գործել Պատվիրատուի շենքի տարածք, և վերջիններս ստիպված են եղել ծառայությունը մատուցել միայն դրսի հենակետում:

Պատվիրատուի ներկայացուցիչները չառարկեցին վերը նշված հայտարարությանը:

Պատվիրատուի ներկայացուցիչները նշեցին նաև, որ համաձայն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրի՝ բոլոր դռնապահ հիվանդապահները պարտավոր են կրել համապատասխան հանդերձանք՝ անվտանգության աշխատակցի տարբերանշանով, և պետք է ունենան անվտանգության տեսուչի անձը հաստատող վկայական, որոնց առկայությունը, սակայն, Ընկերությունը ծառայության մատուցման ընթացքում չի ապահովել:

Ընթացակարգի քննության շրջանակներում Ընկերությունը Բողոքներ քննող անձին է ներկայացրել իր աշխատակիցների պահնորդի որակավորման ստուգման վկայականների պատճենները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

-««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի և «ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ի միջև 23.01.2018թ. կնքվել է պայմանագիր, որը Պատվիրատուի կողմից 27.08.2018թ. միակողմանի լուծվել է՝ Ընկերության կողմից մատուցված ծառայությունը պայմանագրի N1 հավելվածով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմնավորմամբ:

- «ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից 12.11.2018թ. տրված տեղեկանքի համաձայն՝ Պատվիրատուի կողմից նշված Արտավազդ Կանդիլջյանը երբևէ չի հանդիսացել «ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ի աշխատակից:

- Պատվիրատուի ներկայացուցիչները չներկայացրին որևէ ապացույց առ այն, որ 30.07.2018թ. տեղի է ունեցել միջադեպ, որի ժամանակ դռնապահ-հիվանդապահը չի կատարել իր վրա դրված պարտականությունները, այն է՝ չի միջամտել և չի կանխել հիվանդի հարձակումը բուժանձնակազմի վրա: Պատվիրատուի ներկայացուցիչները չներկայացրեցին Բողոքներ քննող անձի կողմից պահանջած՝ միջադեպի առիթով բուժանձնակազմի կողմից ոստիկանություն ահազանգելու փաստը հավաստող որևէ ապացույց:

- Պատվիրատուի կողմից որևէ վերաբերելի ապացույց չնշվեց այն մասին, թե իբր Ընկերության աշխատակիցները պարբերաբար իրենց հետ ոգելից խմիչք են բերում ««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի տարածք և այն վաճառում են հիվանդներին:

Հաշվի առնելով, որ Ընթացակարգի քննության շրջանակներում Պատվիրատուի կողմից չներկայացվեցին Պայմանագիրը միակողմանի լուծելու համար հիմք հանդիսացած՝

Ընկերության կողմից կատարված էական խախտումների վերաբերյալ պատշաճ ապացույցներ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ ««Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի նշված պատճառաբանությունները հիմնավորվ չեն, և Պատվիրատուն՝ Պայմանագիրը միակողմանիորեն լուծելով՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Պայմանագրի 1.1 կետով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 02.11.2018թ. թիվ 27-3/20050-18 գրությամբ «ՊԱՆՏԵՌԱ ՍԻՔՅՈՒՐԻԹԻ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02584071) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ